

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի Ամառնային Վարժողական ծրագիրներ



Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի այս տարեշրջանի «Լէօ Սարգիսեան» եւ «Մարալ Մելքոնեան – Աւետիսեան» վարժողական ծրագիրներուն մասնակցեցան 11 ամերիկահայ համալսարանական ուսանողներ:

Այս տարուան ծրագիրին մասնակցողներն էին՝ Մարիա Մուրատեան, Աննա Պապայեան, Լորի Թամզարեան, Վիքթորիա Դանիէլեան, Քրիսթին Շրակեան, Քէյլ ՄաքՀիու, Արեգ Հորուպեան, Անի Ասթուր, Մելինա Մնացականեան, Վարդան Եիլտիզ եւ Տիանա Առաքելեան: Անոնք մօտէն մասնակցեցան եւ ունեցան իրենց ներդրումը:

Վեցշաբաթեայ ծրագրին ընթացքին, անոնք այցելեցին հարիւրաւոր քոնկրէտականներու գրասենեակներ՝ պահանջելով, որ Ատրպէյճան ազատ արձակէ հայ գերիները եւ աշակցելով միջազգային նախաձեռնութիւններուն, ներառեալ Զուլ-ցերիոյ գլխաւորած Արցախի խաղաղութեան նախաձեռնութիւնը, որ ապահովէ անոնց արժանապատիւ, անվտանգ ու համատեղ վերադարձը:

Հայ Դատ... Ծար. կարդալ էջ 3

Վանաձորում կայացաւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան կազմակերպած պատանեկան ճամբարը



Կարդալ էջ 3

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ուղերձը Հայաստանի Անկախութեան Հռչակագիրի 35-ամեակին առիթով

Սիրելի՛ հայրենակիցներ,
1990 թուականի Օգոստոսի 23-ին, անասելի բարդ պայմաններում, Հայաստանի Գերագոյն խորհուրդը հռչակեց մեր անկախ պետականութեան ստեղծման գործընթացի մեկնարկը: Թէեւ կային քաղաքական տարաձայնութիւններ, Անկախութեան հռչակագիրը ընդունուեց խորհրդարանական եւ արտախորհրդարանական գերթէ բոլոր ուժերի ներգրաւմամբ ու միասնականութեամբ: Այն ամրագրեց հայոց անկախ պետականութիւնը վերակերտելու քաղաքական, պատմական, իրաւական, տնտեսական եւ մշակութային հիմնասիւնները:

Մէկ տարի անց՝ 1991-ի Սեպտեմբերի 21-ին, համաժողովրդական կամքով ու միասնականութեամբ ամրագրուեց անկախութիւնը: Հռչակագիրը դարձաւ մեր պետականութեան օրէնսդրութեան հիմքը եւ արժանի տեղ գտաւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան նախաբանում՝ որպէս նորանկախ պետութեան արժէքային առանցքը, որ ենթակալ չէ փոփոխման:

Անկախութեան ճանապարհը հեշտ չէր. Հայաստանում, Արցախում եւ սփիւռքում մեր ժողովուրդն իր ուսերի վրայ կրեց պատերազմի, ընկերային ու տնտեսական ծանրութիւնների բեռը, դիմագրաւեց փորձութիւններին ու բազմազգար նահատակների գնով պաշտպանեց անկախութիւնը:

Վերջին տարիներին, յատկապէս 2018 թուականից յետոյ, մէկ առ մէկ խաբիւլուցին մեր պետականութեան հիմքերն ու Անկախութեան հռչակագրում ամրագրուած դրոյթները: Ի պատասխան Անկախութեան հռչակագիրը Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան նախաբանից հեռացնելու թշնամական պահանջներին, Հայաստանի գործող իշխանութիւնները յայտարարեցին Հայաստանի Սահմանադրութեան փոփոխութեան գործընթացի մեկնարկի մասին:

Սիրելի՛ հայրենակիցներ,
Անկախութեան հռչակագիրը մեր միասնականութեան հիմքն է: Այն նկարագրում է մեր պետութեան բնոյթն ու համահայկական յանձնառութիւնը: Դա մեր ծննդեան վկայականն է, որի հանդէպ ոտնձգութիւնը յարձակում է պետականութեան հիմքերի վրայ:

Ուստի, անկախ մեր քաղաքական նախընտրութիւններից եւ տարաձայնութիւններից, մեր պարտքն է պաշտպանել հռչակագիրը բոլոր տեսակի ոտնձգութիւններից:

Հաւատարիմ մնալով անկախութեան գաղափարին եւ դրա մէջ ամրագրուած համազգային նպատակներին, պէտք է ուժ գտնենք մերժելու հակապետական ու հակազգային իշխանութիւններին, վերահաստատելով մեր ազատ ապրելու ձգտումը եւ անկախ, ինքնիշխան, ժողովրդավարական ու իրաւական պետութիւն կերտելու կամքը: Սա է խաղաղ ու ապահով ապագայի մեր պետութեան կենսունակութեան երաշխիքը:

Այսօր՝ Հայաստանի Անկախութեան հռչակագրի 35-ամեակի օրը, խոնարհւում ենք անկախութեան համար զոհուածների յիշատակի առջեւ եւ վերահաստատում մեր անմնացորդ նուիրումը՝ հայոց անկախ պետականութեան ամրապնդման գործին:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
23 Օգոստոս 2025

**MAZDA**
GABRIEL

2025 MAZDA CX-50

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES:
KEVORK@GABRIEL.CA

ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Վանաձորում կայացաւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան կազմակերպած պատանեկան ճամբարը

Հայաստանի Լոռու մարզի մարզկեդրոն Վանաձորում կայացաւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան (ԳԵՄ) պատանեկան ճամբարը։ 2025 թուականը յոբելենական է․ այս տարի արդէն 15–րդ անգամ է անցկացւում աւան–դական ճամբարը։
Ճամբարի տնօրէնները, վարիչներն ու մասնակիցները առանձ–նակի ուրախութեամբ ու պատասխանատուութեամբ են մասնակցում ճամբարին։
Ճամբարն այս տարի անցկացուել է Օգոստոսի 4–15–ը։

ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան կազմակերպած Վանաձո–րի ճամբարի տնօրէնուհի էմմա Մաթոսեանը «Հորիզոն»–ի հետ զրոյցում նշեց՝ ճամբարին մասնակցում է 10–16 տարեկան 230 երեխայ։

Վանաձորի ճամբարի տնօրէն Քրիստ Քեթչնճեանը յաւելեց՝ այս տարի ունեն եօթ խումբ, որոնք կրում են մեծ հայերի անուններ՝ Գարեգին Նժդեհ, Արամ Մա–նուկեան, Քրիստափոր Միքայէլեան, Զօրավար Անդրանիկ, Խրիմեան Հայրիկ, Սօսէ մայրիկ, Պարոյր Սեւակ։

«Իւրաքանչիւր խումբ ունի երկու վարիչ։ Մենք ճամբարն անցկացնում ենք ժամը 10–16–ը։ Սկսում ենք դրօշակը ծածանելու արարողութեամբ։ Օրուայ ընթաց–քում ունենում ենք դասախօսութիւնների, ճաշի, խաղերի ժամեր»,– մանրամասնեց ճամբարի տնօրէնը։

Վանաձորի ճամբարը հիւրընկալել էր 2010 թուականին կազմակերպուած ճամբարի վարիչներից մէկին՝ Ալէք Օհանեանին։ Նա յիշեց՝ քանի որ այդ տարի ճամբարն առաջին անգամ էր կազմակերպւում, վարիչներն առանձնակի ոգեւո–րութեամբ էին պատրաստւում ճամբարին։ Ալէք Օհանեանը նկատեց՝ 15 տարի անց ճամբարում նոյն ջերմութիւնն է տիրում։ Ի դէպ, նա արդէն տեղափոխուել է Հա–յաստան, մշտապէս բնակւում է հայրենիքում։ Ըստ Օհանեանի՝ այսպիսի ճամբար–ները հնարաւորութիւն են ընձեռում, որ սփիւռքահայ երիտասարդները հայրենիք ժամանեն, հայրենաճանաչ դառնան եւ յետոյ հաստատուեն Հայաստանում։

ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակի պատասխանատու Յոդիկ Աշըգ–եանը մեր զրոյցում յաւելեց՝ ազգային դաստիարակութեան հարցում չափազանց կարեւոր է այսպիսի ճամբարների անցկացումը։

Վանաձորի ճամբարի վարիչ Ալին Պէրպէրեանը տպաւորուած էր երեխաների պարտաճանաչութեամբ։ «Երեխաները ամէն ինչ արագ են ըմբռնում, փտահօ–րէն արտայայտում են իրենց կարծիքը, հարցեր են տալիս, իսկ դա մեզ օգնում է դասախօսութիւնների ընթացքում»,– մանրամասնեց Ալին Պէրպէրեանը։

Ճամբարի վարիչ Վայք Աճէմեանն առաջին անգամ հայրենիքում եղել է նա–խորդ տարի՝ 2024 թուականին։ Նախորդ տարի եւս ճամբարի վարիչ էր։ Այս տարի էլ սիրով ստանձնել է այդ պատասխանատուութիւնն ու եկել հայրենիք։ Նա տպա–ւորուած է երեխաների քննադատական մտածողութեամբ։ Այսինքն՝ յաճախ ոչ միայն իրենք են երեխաներին որոշ հմտութիւններ սովորեցնում, այլեւ հնչեց իրենք են երեխաներից որոշ բաներ սովորում, եւ այդ կերպ նաեւ մշակութային փոխանա–կում է տեղի ունենում։

Ճամբարի մասնակից Մանէ Յակոբեանն էլ մեր թղթակցի հետ զրոյցում ասաց՝ ճամբարականներին համախմբել է հայրենասիրութիւնը։ «Մեր վարիչները հայրե–նասէր մարդիկ են։ Նրանց հետ շատ կարեւոր հարցեր ենք քննարկում։ Նրանք հայ–րենիքից հեռու են ապրում, բայց ապրում են հայրենիքով»,– ասաց Մանէն։

Ճամբարի մասնակից Տաթեւ Կարապետեանն էլ ընդձեց՝ ճամբարում ժա–մանակն այնքան լաւ է անցնում, որ ասես թռչում է։ «Ճամբարի ընթացքում խաղեր ենք խաղում, ջոկատներով համախմբւում, բռնուցք դառնում։ Իսկ մեր դասախօսութիւնների ընթացքում խօսում ենք հայրենիքի, ազատութեան, արդա–րութեան մասին։ Այդ արժէքները դեռ մանկուց պիտի սերմանուեն մարդու մէջ»,– ասաց Տաթեւը։

Վանաձորի ճամբարի մասնակից Նաթալի Միրզոյեանը, որի ընտանիքը բռնադաղթել է Արցախից ու հաստատուել Վանաձորում, պատմեց՝ ճամբարում նոր երգեր է սովորել։ Սիրում է յատկապէս այն դասախօսութիւնները, որոնց ժա–մանակ հայրենիքի ու հայրենասիրութեան մասին են խօսում։ Զրոյցի ընթացքում Նաթալին յիշեց նաեւ Արցախի մասին՝ փտահօրէն ասելով՝ յոյս ունի, որ էլի՝ կը վերադառնայ Արցախ։
Ճամբարին հիւրընկալուել էին նաեւ ՀՀ Ազգային ժողո–վի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ Քրիստինէ Վարդանեանն ու Արմենուհի Կիւրեղեանը։

Քրիսինէ Վարդանեանն իր դասախօսութեան ընթացքում անդրադառճաւ «հայրենասիրութիւն» հասկացութեանը։ Երեխաները թուարկեցին, թէ իրենց պատ–կերացմամբ ինչ ասել է «հայրենասիրութիւն»․ երբ ապրում ես այնտեղ ու չես լքում հայրենի հողը, երբ մաքուր ես պահում հայրենիքի փողոցներն ու աղբ չես թափում, երբ ուզում ես լաւ մասնագէտ դառնալ ու ծառայել հայրենիքին՝ որպէս տուեալ ոլորտի լաւագոյն մասնագէտներից մէկը… Քրիստինէ Վարդանեանը «Հո–րիզոն»–ի հետ զրոյցում ասաց՝ դասախօսութիւնից յետոյ կրկին ու կրկին հպար–տացել է մեր պատանիներով, քանի որ նրանց մէջ արմատացած է հայրենասիրու–թիւնը, նրանց նպատակներն ու երազանքները հայրենիքի հետ են կապուած։ Ըստ Վարդանեանի՝ այսպիսի ճամբարները երեխաների մէջ սերմանում են ու է՛լ աւելի ամրացնում հայրենասէր ու ազգասէր հային յատուկ արժեհամակարգը։

Պատգամաւոր Արմենուհի Կիւրեղեանն էլ կարեւորեց այսպիսի ճամբարների անցկացումը մեր օրերում, քանի որ այսօր իշխանութիւնն այնպիսի քաղաքակա–նութիւն է վարում, որ հայրենիքը ծանր իրավիճակում է յայտնուել, ուստի հայ–րենիքին նուիրուած, բանիմաց ու գաղափարապէս ազգային արժէքներին հաւա–տացող քաղաքացիներ, այդ թւում՝ պատանիներ ունենալը չափազանց կարեւոր է։

«Այս ճամբարները մեծ հնարաւորութիւն են տալիս երեխաներին, հասկանալ՝ ինչ է հայրենիքը, հայրենասիրութիւնը, չփուել իրենց հասակակից սփիւռքահայ ընկերների հետ։ Նրանք իրենց առօրեան անցկացնում են մի մթնոլորտում, որն իրենց դաստիարակում է որպէս ազգային մտածողութիւն ունեցող պատանիներ։ Այսօրուայ իշխանութիւնն ամէն ինչ անում է, որ ազգային արժէքները մոռացուեն, չկարեւորուեն, ուստի այսպիսի ճամբարների դերն ու նշանակութիւնը գնալով աւելի՛ է կարեւորւում։ Շատ կարեւոր է, որ երեխան մեծանայ՝ հասկանալով՝ ինչպէս պէտք է ապրել, նուիրուել հայրենիքին, ինչ անել պետականութիւն, ինքնիշխա–նութիւն ապահովելու համար, իսկ այդ ամէնի հիմքը այս ճամբարներում դրւում է»,– ընդգծեց Արմենուհի Կիւրեղեանը։

Յաւմիկ Պալէեան

Թորոնթոյի մէջ լոյս տեսաւ «Հորիզոն»ի երկարամեայ աշխատակից Գրիգոր Հոթոյեանի «Սրտաքուխ բանաստեղծութիւններ» հատորը

«Հորիզոն»ի երկարամեայ աշխա–տակից Գրիգոր Հոթոյեանի «Սրտաբուխ բանաստեղծութիւններ» հատորը լոյս տե–սաւ իր ծննդեան 100–ամեակին առթիւ, Թորոնթոյի մէջ, 2025–ին։

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1925–ին։ Երիտասարդական տարիներէն սկսեալ բանաստեղծութիւն–ներով, յօդուածներով, պատմութեաւքներով եւ թղթակցութիւններով աշխատակցած է Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու եւ պարբերաթերթերու, որոնց շարքին նաեւ Գանատայի ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի պաշտօնաթերթ «Հորիզոն»ի։ Արժանացած է Մեծի Տանն Կիլիկիոյ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» չքանչանին, 2005–ին։

Սոյն հատորին մեկեանասութիւնը ստանձնած է իր դուստրը՝ Անի Հոթոյեան Ժողի եւ անոր ամուսինը՝ Մայքըլ Ժողի։ Գիրքին կողքի նկարը պատրաստած է Մարիա Թեւեանց, իսկ գրաշարութիւնը, սրբագ–րութիւնն ու էջադրումը կատարած է Եփրեմ Թոքճեան։ Հատորին բովանդակութիւնը կը կազմեն չարք մը բանաստեղծութիւններ, հետեւեալ բաժանմունքներով․ Հայրենա–կան եւ ազգային յեղափոխական, Շղեունի հետքերով եւ պատգամ հայութեան, Մշա–կութային եւ կրօնական, Սրտայոյգ խոկումներ, Սիրային խոովքներ, Մաղթանքներ եւ ձօներ։ Բժիշկ Օհան Թապաքեան իր «Փոխան յառաջաբանի»ն մէջ գրած է․ «Գրիգոր Հոթոյեան գրագէտ ու արուեստագէտ մըն է, որ յաջողած է իր գրութիւններուն միջո–ցաւ մեր աչքերուն առջև դնել դէպքեր Հայ պատմութենէն ու Հայ մեծ գրագէտներու կեանքէն՝ ընթերցողը մղելով յուզուելու ու սուզուելու իր գծած տեսարաններուն ու դէպքերուն խորքը։ Իր գրականութիւնը հարազատ արտայայտութիւնն է հայ ժողո–վուրդի հոգեմտաւորական ապրումներուն ու բիւրեղացած զգացումներուն։ Գրադէ–տի իր կոչումը ներքին յուզական խլրտում մըն է, որ Գրիգոր Հոթոյեան յաջողած է փոխանցել ընթերցողին։ Ան ունի զբեղու ինքնուրոյն եղանակ մը ու մանաւանդ՝ նիւ–թերու այլազանութիւն, որ գինք կը գանազանէ ուրիշներէն։ Ան իր արձակ գրութիւն–ներուն ու քերթուածներուն իւրաքանչիւրին մէջ իր հոգիէն առանձին շեշտ մը, խանդ մը դրած է արտաբերութիւններուն մէջ՝ դարձնելով իր գրութիւնները պարզ, սակայն անձնադրոշմ»։

Հայ Դատ... Սկիզբը կարդալ էջ 1

Ծրագրիի մասնակիցները հանդիպեցան Հայ Դատի Նախագահ Ճորճ Աղճեանին եւ մօտէն տեղեկութիւններ ստացան Հայաստանի ու Արցախի աշխարհաքաղաքական մարտահրաւէրներու մասին։ Մասնակցողները հանդիպեցան քսանէ աւելի պետական, մամուլի եւ քաղաքական գործիչներու, ներառեալ՝ Հայաստանի մօտ ԱՄՆ նախկին դեսպան Ճոն Էվլընդ, Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, Արցախի նախկին ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան, խորհրդական–ներ Ջարլի Մահտեսեան եւ դոկտ. Ռապըրթ Գրի Գրեան։ Անոնք հանդիպեցան նաեւ՝ իրաւաբաններ Ռուիթ Վեթրլի, Թամար Ալեքսանեանի եւ Քէյթ Նահապետեանի, հան–րային կապերու մասնագէտներ՝ Էնտի Սուրապեանի, Գարուն Ջոլաքեանի եւ Տէյվիտ Գէորգեանի, խորհրդատու ՄՆՆը Սէթեանի հետ։

Անոնք այցելեցին նաեւ Քոնկլէնսի գրադարան՝ ուսումնասիրելու հայկական հաւաքածոն, ուր դոկտ. Խաչիկ Մուրատեան ցուցադրեց բազմաթիւ յատուկ փաստա–թուղթեր։

Մարիա Մուրատեան նշեց. «Անհաւատալի փորձառութիւն եղաւ։ Մասնագի–տական ու անձնական աճ ապրեցայ։ Կարողացայ գործուն մասնակցութիւն բերել Հայ Դատին»։

Աննա Պապայեան ըսաւ. «Ծրագիրը օգնեց ուղղութիւն գտնելու ապագայ մաս–նագիտութեանս մէջ, զարգացնելու մասնագիտական հմտութիւններ եւ ստեղծելու հզօր ցանց մը, որ երկար տարիներ պիտի պահուի»։

Լորի Թամզարեան, իր կարգին ըսաւ. «Ամառնային հետաքրքրական փորձառու–թիւններէս մէկը եղաւ այս ծրագիրը։ Ձեռք բերի գործնական փորձառութիւն հայերու համար բարեխօսութեան մէջ եւ հմտութիւններ, որոնք պիտի առաջնորդեն կեանքիս ընթացքին։ Ամէնէն կարեւորը՝ այն կապերը, որ ստեղծեցի Հայ Դատի նուիրեալ երի–տասարդներու հետ»։

Վիքթորիա Դանիէլեան ընդգծեց. «Խմբային աշխատանքը իսկապէս ոգեշնչող էր․ իւրաքանչիւրս ունէր տարբեր գործելաձեւ, եւ միասին կերտեցինք ներշնչող խումբ մը»։

Քրիսթին Շրակեան, նշեց. «Հայ Իրաւաբանական Կեդրոնին ներքեւ գործած ըլ–լալով՝ փորձառութիւն ձեռք բերեցի միջազգային իրաւաբանական փաստաթուղթերու մէջ եւ յաւելեալ մասնագիտութիւն ստացայ միջազգային իրաւունքի մասին»։

Քէյլ ՄաքՀիււ յայտնեց. «Ես ամէնուն խորհուրդ կու տամ, որ մասնակցութիւն բերեն այս ծրագրերուն։ Կատարուած աշխատանքը՝ չափազանց կարեւոր է »։

Արեգ Հորուպեան ընդգծեց. «Վեց շաբաթ այս մասնագիտական փորձառութիւն ձեռք բերելն էր, զոր կը փափաքէի եւ այդպէս ալ իրագործեցի»։

Անի Ասթուր աւելցուց. «Կը յանձնարարեմ բոլոր հայ երիտասարդներուն, որպէս–զի մասնակցին այս ծրագրին։ Կը ստանաք ոչ միայն գործնական փորձառութիւն, այ–լեւ ընկերութիւն ու յուշեր»։

Մեղինա Մնացականեան ըսաւ. «Ես միաժամանակ գիտելիք ձեռք բերի մեր մշա–կոյթին եւ քաղաքականութիւններուն մասին եւ անշուշտ մաս կազմեցի մեծ ընտանի–քի մը»։

Վարդան Եիլտիզ շեշտեց. «Ծրագիրը պատճառ մըն է, որ յոյս ունենամ, իմ ապագայ մասնագիտութեան ընթացքին նպաստելու Հայ Դատին եւ այլ մարդասիրա–կան գործերու»։

Տիանա Առաքելեան ընդգծեց. «Ծրագիրը ինծի հնարաւորութիւն տուաւ իմ ներդրումս ունենալու Հայ Դատին եւ միաժամանակ զարգացնել գործնական հմտու–թիւններ հանրային ելոյթներու։ Այժմ աւելի յստակ ուղղութիւն ունիմ իմ ապագայի ուսումնական ու մասնագիտական ճամբուս համար»։

Թրամփ-Փութին Ալասքայի վեհաժողովը եւ Միջին Արեւելքի հնարաւոր կարգաւորումները

Օգոստոս 2025–ին Ալասքայի մէջ Միաց–եալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի միջեւ տեղի ունեցած վեհաժողովը մեծ մասամբ քննարկեց Ուքրանիոյ հակամարտութիւնը։ Սակայն հանդիպումը միաժամանակ հարցեր բարձրացուց աշխարհաքաղաքական տարբեր խնդիրներու մասին, որոնք կ'առնչ–ուին Եւրոպայի եւ Միջին Արեւելքի հարցերուն։ Թէեւ Միջին Արեւելքը բացակայ էր պաշտօնական հաղորդադրութեանէն, սակայն շատ հաւանական է, որ Սուրիա, Իրան եւ Իսրայէլ ներգրաւուած ըլլան ամերիկեան–ռուսական յառաջիկայ փուլերուն։

Ալասքայի վեհաժողովը եղաւ 2025–ի ամէնէն ուշագրաւ դիւանագիտական հանդիպումներէն մէկը։ Անիկա տեղի ունեցաւ այն պահուն, երբ Ուքրանիոյ պատերազմը աւելի ու աւելի մաշեցնող փուլ թեւա–կոխած է։ Պաշտօնական բացատրութեամբ, վեհաժո–ղովը նպատակ ունէր դուրս գալ այս մաշեցնող վի–ճակէն։ Փութին կը փնտռէր միջազգային ճանաչում եւ պատժամիջոցներու թուլացում, մինչդեռ Թրամփ ուզեց ներկայանալ իրբեւ խաղաղութեան առաջնորդ։

Բոլոր քննարկումներուն կեդրոնը Ուքրանիան էր, յատկապէս՝ ՕթԱՆ–ի անվտանգութեան երաշխիքներու հետ կապուած։ Բայց նոյնքան կարեւոր է նաեւ այն, ինչ որ չըսուեցաւ։ Հանդիպումի ընթացքին Միջին Արեւելքի խնդիրներու ոչ մէկ ակնարկութիւն եղաւ։ Դիւանագիտութեան մէջ լռութիւնը հազուադէպօրէն պատահական է։ Աւելի յարմար է զայն մեկնաբանել որպէս գիտակցաբար ընտրուած յետաձգում։

Քաղաքական ձեռքբերումնե՞ր

Վեհաժողովին անմիջական արդիւնքները լայ–նօրէն ներկայացուեցան որպէս մարտավարական յաղթանակ մը Փութինի համար։ Ան միջազգային բեմ վերադարձաւ՝ Միացեալ Նահանգներու նախագահին հետ հաւասար մակարդակի վրայ նստելով, առանց նոր պատժամիջոցներու բախելու։

Թրամփի համար վեհաժողովը ծառայեց ներքին եւ արտաքին նպատակներու։ Ներքին ճակատի վրայ ան ամրապնդեց իր պատկերը՝ որպէս առաջնորդ, որ կը շրջանցէ պաշտօնական կառոյցները, իսկ աշխարհին ցոյց տուաւ իր նախընտրութիւնը՝ առաջնորդ դէպի առաջնորդ դիւանագիտութեան։ Այս գիծը հա–մահունչ է անոր ընդհանուր արտաքին քաղաքական ոճին, նախընտրեց երկկողմանի յաղթանակներ ապա–հովել, քան՝ վստահիլ բազմակողմանի կառոյցներու ճիգերուն։

Միջին Արեւելքը՝ որպէս լուռ դիւանագիտու–թիւն

Միջազգային յարաբերութիւններու տեսու–թիւնը կ'ընդգծէ, որ մեծ պետութիւնները յաճախ տարբեր հակամարտութիւնները կը կապեն իրարու։ Այս պարագային, Ռուսիան կրնայ աւելի ճկուն ըլլալ Ուքրանիոյ հարցին մէջ, եթէ Միացեալ Նահանգները լուռ կերպով ընդունին Մոսկուայի գերակայութիւնը Սուրիոյ մէջ։ Նոյնպէս, Ուաշինկթընի համար լծակ կրնայ ըլլալ Մոսկուայի ազդեցութիւնը Իրանի վրայ՝ մանաւանդ կորիզային հարցերուն շուրջ։

Պատմական նախադէպեր ալ կան։ Պաղ պատե–րազմին զէնքերու վերահսկողութեան համաձայնու–թիւնները յաճախ զուգորդուած էին լուռ պայմանա–ւորուածութեամբ՝ Միջին Արեւելքի կամ Ասիոյ մէջ։

Ռուսիոյ առանձնայատկութիւնը այն է, որ կը պահպանէ միաժամանակ կապեր Ե՛ւ Իրանի, Ե՛ւ Իս–րայէլի հետ։ Սուրիոյ մէջ ան գործակցեցաւ Իրանի հետ, բայց նաեւ թոյլատրեց Իսրայէլին՝ օդային հար–ուածներ իրանեան դիրքերուն դէմ։ Այս երկակի դերը Մոսկուային կը տրամադրէ բացառիկ ճկունութիւն։

Եթէ Ուքրանիոյ շուրջ բանակցութիւնները ուղ–ղակի ազդեցութիւն ունին քարիւղի ու կազի հոսքե–րու վրայ, ապա անոնք անուղղակիօրէն կապ ունին Միջին Արեւելքի կայունութեան վրայ՝ նկատի ու–նենալով այս ծիրին մէջ գլխաւոր դերակատարներէն մէկը՝ Սէուտական Արաբիան։

Ռազմավարական Լոութիւն

Ալասքայի վեհաժողովին Միջին Արեւելքի հար–ցերու բացակայութիւնը կրնայ մեկնաբանուիլ որպէս ռազմավարական անորոշութիւն։ Այս լռութիւնը եր–կու կողմերուն ալ կու տայ ճկունութիւն՝ հետագայ գաղտնի բանակցութիւններու դռները բաց պահելով։

Այս անորոշութիւնը լուրջ հետեւանքներ կրնայ ունենալ․

– Իսրայէլ կը մտահոգուի, որ Ամերիկա–Ռուսիա այս հանդիպումը կրնայ սահմանափակել իր գործո–ղութիւնները Սուրիոյ մէջ։

– Իրան կրնայ մեկնաբանել լռութիւնը որ–պէս Ուաշինկթընի անուղղակի ընդունում՝ Ռուսիոյ առաջնային դերի։

– Մէուտական Արաբիան եւ Ծոցի երկիրները կը տեսնեն վեհաժողովը որպէս նախազգուշացում, որ իրենց անվտանգութիւնը կրնայ երկրորդական դառ–նալ մեծ պետութիւններու համաձայնութիւններուն դիմաց։

Եզրակացութիւն

Ալասքայի վեհաժողովը կը բացայայտէ մեծ պե–տութիւններու, դիւանագիտութեան կրկնակի բնոյթ․ այն, ինչ կ'ըսուի, եւ այն, ինչ որ չ'ըսուիր։ Պաշտօնա–կան մակարդակով, խօսակցութիւնը Ուքրանիոյ շուրջ էր։ Բայց լռութիւնը Միջին Արեւելքի վերաբերեալ՝ չի նշանակեր անպատասխանատուութիւն, այլ կը նշա–նակէ յետաձգուած օրակարգ։

Տեսութիւններու եւ պատմական փորձառու–թեան հիման վրայ կարելի է ենթադրել, որ ապագայ բանակցութիւններուն մէջ Միջին Արեւելքը պիտի վերադառնայ իրբեւ փոխանակման նիւթ։ Տարածաշր–ջանի պետութիւններուն համար այս լռութիւնը եւս մէկ անգամ ցոյց տայ, որ իրենց ճակատագիրը յա–ճախ կ'որոշուի ոչ թէ տեղական զարգացումներուն, այլ մեծ պետութիւններու աշխարհաքաղաքական հաշուարկներուն հիման վրայ։

Վերա Եագուպեան

Դաշնակցական երիտասարդներու տպաւորութիւնները` ՀՅԴ 12-րդ Համահայկական բանակումին մասին

Ամրապնդեցինք ՀՅԴ-ի գաղափարին ծառայելու մեր հաստատականութիւնը

ՀՅԴ համահայկական երիտասարդական եւ ուսանողական բանակումները պատմականօրէն հիմնաքարը հանդիսացած են դաշնակցական երիտասարդութեան համախմբումին։ Դաշնակցականին համար կազմակերպութեան չափ էական է նաեւ կազմա–կերպուածութիւնը, եւ այս բանակումը, իր էութեամբ, արդէն իսկ կը նպաստէր աշխարհասփիւռ Դաշնակցութեան ընտանիքի երիտասարդութեան կազմա–կերպուածութեան։

Այս տարի եւս աւելի քան 350 դաշնակցական երիտասարդներ, աշխարհի զանազան անկիւններէն համախմբուած, ձայն բարձրացուցին մեր ժողովուրդին առջեւ ծառայած հարցերուն շուրջ՝ նպատակ ունենալով միաւորել ջանքերը ի սպաս հայրենիքին, ի շահ միացեալ պայքարին։

Բանակումի օրակարգը բեղուն էր, իմաստալից ու նպատակասլաց։ Դժուար է բառերու մէջ ամփոփել ութ օրուան ընթացքին ստեղծուած մթնոլորտն ու գործադրուած ծրագիրները, սակայն կարելի է հաստատել, որ ամէն մէկ այցելութեան, ամէն մէկ քննարկումի եւ ամէն գիշեր խարոյկին շուրջ կը տի–րէր նոյն ոգին՝ գաղափարին ծառայելու հաստատա–կամութիւնը։

Սարգարապատն ու Եռաբլուրը անբաժան մաս կազմեցին այս բանակումին։ Ո՛չ միայն վայրեր, այլ խորհրդանիշներ՝ դաշնակցականի կեանքին մէջ։ Խորհրդանիշներ՝ «Մահ կամ ազատութիւն» գաղափարին, որուն շուրջ կը ձեւաւորուի դաշնակ–

ցականի մը ամբողջ էութիւնը։

Էջմիածնի Մայր Աթոռ այցելութիւնը լուսարձակի տակ առաւ մեր երդումը՝ պաշտպանել ազգային ու հոգեւոր արժէքները։ Իսկ Ծիծեռնակաբերդի եւ «Նեմեսիս»–ի արդարութեան յուշարձաններուն այցելութիւնները պատգամ էին՝ Ե՛ւ բարեկա–մին, Ե՛ւ թշնամիին։ Այս էր պատգամը այս բանակու–մին, եւ այս է Դաշնակցութեան երիտասարդութիւնը, որ նոյնիսկ խնճոյքի սեղանին շուրջ կը յիշէ եւ կը փառաբանէ ազգի հերոսները՝ համեստօրէն ուխտե–լով շարունակել անոնց գործը։ Այս տրամադրութիւնը տիրական էր խարոյկին շուրջ ամէն գիշեր, եւ այս ոգիով ընթացան բանակումի մեր բոլոր աշխատանք–ները։

Բանակումին «Պիտի՛ վերադառնանք» կարգախօսը իր մէջ կը կրէ բազմազան իմաստներ ու մեկ–նաբանութիւններ, սակայն անոնց էութիւնը կը մնայ մէկ՝ վերադարձ դէպի ակունք, դէպի հայրենի հողեր, դէպի ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան։ Հոն, ուր կը սկսի մեր ժողովուրդին պատմութիւնը։

Ամբոխները չեն կրնար պատմութիւն փոխել, եւ մենք ամբոխ մը չենք։ Մենք ենք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդութիւնը եւ կը գիտակցինք, որ ազգիս բարօրութիւնը կը սնանի զոհողու–թեան սեղանէն։

Այդ պատմութեան շարունակականութիւնը կը պահանջէ որակաւոր զոհողութիւն։

Այս բանակումը բացի գաղափարական իր բնոյ–



թէն՝ եղաւ նաեւ կազմակերպական ու քաղաքական դպրոց։ Նպատակը յստակ էր՝ բարձրացնել դաշնակցական երիտասարդութեան կարողութիւններն ու քաղաքականացման մակարդակը, որպէսզի անոնք աւելի կազմակերպուած կերպով նետուին աշխատանքի դաշտ։

Բանակումին աւարտը հրաժեշտէ աւելի՛ խոստում մըն էր գաղափարակից ընկերներու միջեւ՝ յաջողութիւն մաղթելով իրարու եւ բոլորիս աշխատանքին։ Վստահ եմ, որ այս բանակումը նոր թափ պիտի տայ մեր աշխարհասփիւռ աշխատանքներուն։ Ուստի ես ալ, իմ կարգիս, յաջողութիւն կը մաղթեմ մեր բոլոր աշխատանքներուն, ընկերնե՛ր։

Մինչ յաջորդ հանդիպում։

Մովսէս Արզումանեան

ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան
Կեդրոնական վարչութեան Գեորգիա Գիւնեօ



3401, Olivar Asselin
Montréal, Qc
H4J 1L5

397, boul. des Prairies
Laval, Qc
H7N 2W6

45 Hallcrown Place
Willowdale, On
M2J 4Y4

To donate online www.camam.org



Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼՎԻԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

***Լոռ Զաւոյէ՝**

Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

Baku won ‘a great deal’ at White House meeting, while Yerevan got ‘no dividend,’ says former senior U.S. diplomat

LONDON — The Armenian-Azerbaijani agreements signed in Washington earlier this month won “a great deal” for Baku, while Yerevan was left more vulnerable, without a “significant peace dividend,” said a former State Department official, who was directly involved with the Armenia-Azerbaijan conflict during the Biden Administration.

In an article published by the European Council on Foreign Relations, James O’Brien, who served as assistant secretary of state in the Biden administration and was the key State Department negotiator on the Armenia-Azerbaijan conflict, portrayed the deal as a major win for Azerbaijan and warned of pitfalls in its implementation, with Armenia gaining nothing but a vague development deal for a road.

“President Ilham Aliyev did not get the complete climb down by Armenia that he wanted, but he won a great deal,” O’Brien said. “In short, the US paid up front while Aliyev only had to reiterate peace assurances he has offered many times before.”

“Aliyev leaves with an agreement that deepens his relationship with the US, securing help for a safe connection with Nakhchivan and a promise of US investment in the corridor. One foundation of the peace-in-practice proposed by the Biden team was a US pledge to impose sanctions on officials and companies that build, operate or use a corridor without Armenian consent.

Ankara breaks ground on rail link to so-called ‘Zangezur Corridor’

KARS — Turkey broke ground on August 29 on a railway connection from the northeastern Kars province to Nakhichevan as what a Turkish official called a link to the so-called “Zangezur Corridor.”

Despite assurances from Yerevan that a 27-mile stretch of road it agreed to lease to the United States would operate under Armenia laws, Baku and Ankara continue to claim victory on making their scheme to create a land corridor, which Azerbaijan dubs as the “Zangezur Corridor, through Armenia a reality.

Speaking the the groundbreaking ceremony Abulkadir Uraloglu, Turkey’s transport minister, said that the event marked one of the “concrete initial steps toward realizing the ‘Zangezur Corridor’ that will lead a mark on the entire South Caucasus and Eurasia.”

Official Yerevan offered what it deemed to be a response to Ankara by saying that only projects approved by the government of Armenia can be implemented in the country, not clarifying how a railway being

From Aliyev’s standpoint, a US promise to back the corridor now, before Armenia has taken the final step of amending its constitution, could mean that this bit of leverage has been surrendered,” O’Brien explained.

The agreement signed between Aliyev and Prime Minister Nikol Pashinyan at the White House, with President Donald Trump serving as a witness, provides a long-term lease to the U.S. of a strategic 27-mile road in Armenia’s Syunik Province, that will give Azerbaijan direct access to Nakhichevan.

“There will be no substantial peace dividend for Armenia: no open border with Turkey, no extra investments for Armenia’s benefit.. only a corridor connecting different parts of Azerbaijan,” O’Brien emphasized.

The former senior diplomat said that this could pose potential problems and challenges for Pashinyan ahead of the 2026 Parliamentary Elections, set for June.

Amid calls and threats by Aliyev for Armenia to amend its Constitution, Pashinyan has spearheaded an effort to enact changes to that document. In a statement issued Saturday on the 35th anniversary of Armenia’s Declaration of Independence, Pashinyan, again, pushed forward his so-called “Real Armenia” doctrine, which envisions talk or mention of Artsakh or its population that

Continued on page E2

constructed by Turkey would require Armenian government approval.

“The Kars-Igdir-Aralık-Dilucu railway line is far more than just a railway. It is a path that will resonate on the international stage, reinforce Turkey’s geo-strategic leadership, and pave the way for unity, prosperity and peace,” Uraloglu said, according to The Daily Sabah.

“It will strengthen Turkey’s export goals, broaden the horizons of our youth and bring smiles to the faces of our industrialists and tradespeople,” he added, explaining that the link will have capacity to carry 5.5 million passengers and 15 million metric tons of cargo a year.

“The Zangezur Corridor will strengthen economic cooperation between Turkey, Azerbaijan, and Armenia and reinforce regional peace,” Uraloglu said, adding that the project will help open borders and normalize diplomatic relations in the Southern Caucasus.

“It will usher in a golden era for global trade, especially for countries involved in the Middle Corridor,” he added.

Pashinyan vows to continue his campaign to oust Catholicos Karekin II

YEREVAN—Prime Minister Nikol Pashinyan said on August 28 that he has not abandoned his efforts to oust Catholicos Karekin II despite a backlash from opposition groups and other supporters of the supreme head of the Armenian Apostolic Church.

Pashinyan has been pressuring Karekin II to resign, saying that the latter had fathered a child in breach of his vows of celibacy. His detractors say that he is simply trying to please Azerbaijan and/or neutralize a key source of opposition to his unilateral concessions to Armenia’s arch-foe.

In a July 20 appeal to his supporters, Pashinyan pledged to “free” the Etchmiadzin seat of the Catholicos, which is part of the town of Vagharshapat, from Karekin II. He said they should gear up for a rally in Vagharshapat’s central square adjacent to the church’s Mother See.

Karekin II’s office accused Pashinyan on July 21 of planning a violent attack on the Mother See. Armenian opposition groups condemned Pashinyan’s declared plans in even stronger terms. They also urged their supporters to be ready to rush to Etchmiadzin and protect the Catholicos.

Pashinyan has still not set a date for the promised rally. Has made no further calls for Karekin II’s ouster on social media since July 23, prompting speculation that he dropped his controversial plans.

“My plans cannot change,” Pashinyan insisted, calling on Karekin II to quit “voluntarily.”

“Yes, the Catholicosate must be freed from Ktrich Nersisian (Karekin II’s original name) and it must be freed through the efforts of fol-

lowers of the Armenian Apostolic Holy Church, one of whom is me. I have said that I will lead that process, and I think that you will definitely see its manifestations in the near future,” he said without specifying any dates.

Bishop Hovnan Hakobyan, the head of a church diocese encompassing the northern Lori province, scoffed at Pashinyan’s remarks, saying that he will fail to depose the Catholicos.

“He [Pashinyan] will go, not His Holiness,” Hakobyan told RFE/RL’s Armenian Service.

“Suppose they gather 15, 150 or even 1,500 crazy people like him. So what? How many other people will he be up against? Let him talk about that,” said the bishop highly critical of the prime minister.

Pashinyan launched his campaign against the top clergy of the Armenian Church right after the World Council of Churches hosted in late May an international conference in Switzerland on the preservation of Nagorno-Karabagh’s Armenian religious and cultural heritage.

Karekin II attended and addressed the conference. In a speech, he accused Azerbaijan of committing ethnic cleansing in Karabagh and illegally occupying Armenian border areas. He also denounced the ongoing “sham trials” of eight former Karabagh leaders captured during Azerbaijan’s September 2023 offensive.

Azerbaijan’s top Shia Muslim cleric closely linked to the government responded by accusing the Armenian Church of spreading “provocative, revanchist propaganda” and inciting Armenians to “fight to the death.”

(RFE/RL)

Aliyev renews threats and demands

BAKU — President Ilham Aliyev of Azerbaijan asserted that Armenia will amend its Constitution to fulfill his precondition for signing a peace treaty with Yerevan, as he continued to make threats against Yerevan, warning of severe consequences of any attempt to alter agreements signed at the White House.

“As far as we understand, they will make the change,” Aliyev told the Saudi state-owned broadcaster Al Arabiya. “And as soon as this constitutional amendment is made, as soon as the territorial claims against Azerbaijan are removed, the peace agreement will officially be signed.”

“The negotiations lasted, as I said, for several years and ended in Washington with the great support of President Trump and his team. Actually, I think that this is the end of the conflict, the end of the war. Formally, the peace agreement was not signed for one particular reason: there is still a provision in the Armenian constitution that casts doubt on Azerbaijan’s territorial integrity,” Aliyev said, referring to talks he held with Prime Minister Nikol Pashinyan at the White House on August 8.

Foreign Minister Ararat Mirzoyan on Wednesday denied that Armenia will change its Constitution based on pressure from Azerbaijan.

“The issue of the constitution was not discussed in Washington,” Mirzoyan told Armenian Public Television. “We have no obligations to third countries on this issue.”

Aliyev also addressed the issue of a road in Armenia’s Syunik Province that will connect Azerbaijan to Nakhichevan. The White House agreement stipulates that Armenia will lease the 27-mile road to the United

States, which through private investments will manage traffic and flow of cargo, reportedly in line with Armenian laws.

This road is the exact route that Aliyev has been demanding to fulfill his scheme for what he calls the “Zangezur Corridor.”

With the “Zangezur Corridor,” Armenia will get transit fees from transportation, Azerbaijani president Aliyev said in the interview.

“Taking into account that the volumes of cargo from Asia to Europe through Azerbaijan are growing year by year, I’m sure that the ‘Zangezur Corridor’ will be an important transportation link connecting the continents... So now, when President Trump gave his name to the Zangezur Corridor, I’m sure that it will materialize very soon,” Aliyev said, referring to the naming of the road the Trump Route for Peace and Prosperity—or TRIPP.

“From the point of building the physical infrastructure—I mean the railroad—it should not take a long time, because it’s only 42 kilometers. If we were to build it ourselves, we would have done it in one year. Maybe for Armenia it will take a few more years because we have more experience in building railroads,” Aliyev said.

“During these almost five years of negotiations, Armenia did not demonstrate a constructive approach with respect to our demands or legitimate requests,” the Azerbaijani president contended.

“So when President Trump and his team started to be involved in the process and wanted to facilitate this matter, our message to them was: without the ‘Zangezur Corridor’ being operational and safe, in order for Azerbaijani citizens to travel safely along this

40-plus-kilometer route, there must be strong security guarantees—international security guarantees. Only security guarantees from Armenia alone will not be enough,” Aliyev asserted.

“So the Trump administration accepted this legitimate concern with the proper attitude, and that’s how it turned into TRIPP—the Trump Route for International Peace and Prosperity. So now, when President Trump gave his name to the Zangezur Corridor, I’m sure that it will materialize very soon,” said the Azerbaijani president.

Aliyev went on to accuse Armenia of deviating from the provisions of the Washington agreement, warning that it “would be very harmful for Armenia,” if it deviates from the points set in the document.

“No matter who signed the documents in Washington, it was signed on behalf of Armenia by the Armenian leader. If something happens with respect to changes, and they step back from what has been signed, that would seriously deteriorate relations between Armenia and the United States,” Aliyev said.

“What was initialed in Washington on the August 8 was based on the Azerbaijani vision of how interstate relations between Armenia and Azerbaijan should be framed,” Aliyev claimed.

“What I am trying to say is that if any future government of Armenia, no matter when it comes to power, casts doubt on what has been signed in Washington, Armenia will face serious complications, because the balance of power in the region is absolutely in our favor from all points of view. I think it’s obvious to everyone, and if Armenia again puts under doubt our territorial integrity, we will respond adequately,” Aliyev threatened.

A Mari Usque Ad Mare

GOVERNMENT OF CANADA INVESTING IN FRANCOPHONE MINORITY COMMUNITY IN ONTARIO

In a recent press briefing made by Mona Fortier, MP for Ottawa-Vanier-Gloucester, on behalf of Marjorie Michel, Minister of Health, a new investment of \$33-million was announved, that will help fund four different francophone post-secondary training institutions across the province of Ontario and an additional \$1-million investment for the provincial government of Ontario to help increase access to health care services in French for Francophone communities across the province.

MP Mona Fortier said: “as a proud Franco-Ontarian, I know how important it is for Francophones in minority communities to receive health services in the language of their choice. Our investment will improve access to more inclusive and effective care and make sure official languages are supported within our health care system.”

“The importance of preparing the next generation of French-speaking health care workers, from recruitment to professional integration in Francophone minority communities, cannot be overstated. Health Canada’s contribution will leverage the Association des collèges et universités de la francophonie canadienne’s (ACUFC) ability to support postsecondary institutions that are members of the Consortium national de formation en santé in their efforts to increase the number of health professionals providing French-language services. It will also allow our network to continue to overcome existing barriers and ensure that Canadians have access to equitable health services in the language of their choice,” said Martin Normand, President and Chief Executive Officer, Association des collèges et universités de la francophonie canadienne - Consortium national de formation en santé.

GOVERNMENT OF CANADA INVESTING IN ONTARIO

In a recent press declaration by the Government of Canada, a new investment of over \$748-million was committed for Ontario and the Association of Municipalities of Ontario (AMO), to help in building stronger and safer communities that are more connected than ever. This investment will see to the growth and construction of more new housing, along with critical infrastructure projects — like public transit, water systems, and local roads and bridges. The funding will support building essential infrastructure but also will see that there recreational facilities but as well to see Canadian families thrive in their communities.

Gregor Robertson, Minister of Housing and Infrastructure said: “building a strong Canada starts with building strong communities. We are investing in new infrastructure projects that support housing and foster connected communities. Our investment in communities throughout Ontario reinforces our commitment to building bold, building strong, and building together.”

“We are grateful to Minister Robertson and the federal government for their continued investments in critical infrastructure across Ontario and Canada. Ontario’s municipalities use the Canada Community-Building Fund for investment in projects that help our communities grow, thrive and prosper. The permanency of that Fund enables local governments to plan and prioritize infrastructure needs for the next decade, and allows for multi-year infrastructure projects that support vital growth and development in our towns and cities,” said Robin Jones, President, Association of Municipalities of Ontario.

MINISTER JOLY AND SECRETARY OF STATE FUHR WILL VISIT SWEDEN AND FINLAND TO ADVANCE CANADIAN ECONOMIC INTERESTS

In a recent press declaration, it was stated that Mélanie Joly, Minister of Industry and Minister responsible for Canada Economic Development for Quebec Regions, and Stephen Fuhr, Secretary of State (Defence Procurement), will make their way to Stockholm, Sweden, and Helsinki, Finland, to being strategic talks to help advance Canada’s industrial and economic interests with other countries. Minister Joly and Secretary of State Fuhr will discuss and focus on key sectors, including aerospace, defence, shipbuilding, biomanufacturing, automotive, mining and telecommunications. These talks will create a space for all the countries at the table to strengthen relationships and mutually create plans for future economic development.

“Canada is a global leader in innovation. Our companies and workers are at the forefront of international excellence, attracting investment and forging strong partnerships. At this pivotal moment, Canada is strengthening its relationships with trusted allies, diversifying supply chains and delivering the advanced technologies, resources and expertise the world needs,” said the Minister Joly.

Secretary of State Fuhr said: “as global security challenges evolve, Canada must reinforce our sovereignty and collaborate with like-minded allies. Canada’s defence industry, with talent and capabilities recognized worldwide, plays a vital role in supporting these efforts. By engaging allies and strengthening industrial collaboration, we can create investment opportunities for our workers, grow the defence sector, and secure Canada’s future.”

ISHKHAN GHAZARIAN
Local Journalism Initiative Reporter

BAKU ...

continued from page E1

was forcedly displaced as a result of a brutal attack by Azerbaijan in 2023.

“The election campaign will now be dominated by the prospect of a coerced constitutional change. This will be deeply unpopular in Armenia and will hurt Pashinyan further,” O’Brien projected.

“There will be no final agreement for at least a year because Azerbaijan insists Armenia remove from its constitution any reference to periods when Armenia governed parts of Azerbaijan, including areas that have been historically inhabited by ethnic Armenians. Any amendment to Armenia’s constitution will not happen before next year’s election—now set to be overshadowed by this very issue,” O’Brien said.

He also said that there were personal stakes for Trump in the deal, namely the road-lease deal that will be called the Trump Route for Peace and Prosperity—or TRIPP.

“Is TRIPP destined to become another “Lake Trump”, the body of water on the Serbia-Kosovo border where the United States president tried to slap a brand name without actually resolving the conflict?” O’Brien Pondered.

He said the White House ceremony “revealed two truths: that the US is a major player in the south Caucasus, long Russia’s backyard, and that peace is achievable, even if politicians in both countries (especially Azerbaijan) keep their publics ready for war.”

“It also marks Trump’s personal involvement in a crucial region, potentially kickstarting massive economic benefits. In fact, Trump’s involvement might have been the key factor in securing this agreement,” he emphasized.

“The problem is that the corridor’s success depends on accessible routes to global markets, with Turkish ports the only scalable option. Turkey, then, will decide whether the corridor lives up to its promise. But the border between Armenia and Turkey remains closed and is likely to stay that way until a final peace deal is signed—and the price is likely to go up if Armenia does not change its constitution,” O’Brien said.

“Until the promised regional super-highway opens, the only real

costumer for this short corridor is Baku. Given this uncertainty, early entrants in this project may pursue short-term benefits to themselves, such as taking exorbitant loans on favorable terms, using construction contracts to obtain more loans from interested banks, or quickly selling the concession to unknown third parties. Each step in this cut-and-run capitalism will create opportunities for graft, inefficiency and manipulation,”

“If the corridor fails to develop into a global network soon, it will then be of interest almost exclusively to Azerbaijan. This will tempt Moscow-dependent and hardline Armenian officials to use it as leverage in relations with Azerbaijan. Things could come to this point in a year or two, when Azerbaijan might claim US acquiescence in securing the corridor,” O’Brien said.

“The responsibility to protect the corridor seems to be falling through the cracks among the multiple players. Based on private conversations, US troops might be deployed to protect US commercial interests there, if they exist by then. While this sounds like the late-19th-century gunboat diplomacy that appeals to Trump, such a move seems unlikely. It would be unwise for a business to assume that an anti-intervention president would send US troops into territory where Russia, Iran, Turkey and now the twice-victorious Azerbaijan can escalate quickly,” O’Brien revealed.

The former U.S. diplomat said that during his tenure, President Joe Biden was not directly involved, claiming that the

U.S. was “concerned” about the fate of the more than 120,000 displaced Artsakh Armenians, despite the fact that the Biden Administration took no concrete steps to address them or to hold Baku accountable for what many international human rights advocates called ethnic cleansing.

He said the U.S. was also concerned about Azerbaijan’s crackdown on civil society and that official Baku would expel the United States Agency for International Development, which the Trump Administration effectively has disbanded.

“Now the Trump administration itself defunded USAID, and the White House ceremony signals that Washington is no longer concerned over Azerbaijan’s 2020 and 2023 military actions in Nagorno-Karabagh,” O’Brien said.

In the article, O’Brien also discussed Russia’s role in the process.

“The White House ceremony did send a strong message to Moscow, which has long regarded the south Caucasus as its zone of influence but is now weakened by Ukraine, sanctions and harsh disagreements with both Yerevan and Baku,” the former U.S. Diplomat said.

